

Ռոբերտ Պ. Ղազարյան  
*Պատմ. գիտ. թեկնածու*

«ԽՈՒԿԿԱՆԱՅԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ»  
ՈՐՊԵՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ  
ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՓԱՏՏԱԹՈՒՂԹ\*  
Պատմ. գիտ. թեկնածու

**Բանալի բառեր** – Խուկկանա, Սուպպիլուլիումա, Հայասա, Խաթթի, պայմանագիր, Մարիյա, Թուդխալիյա, Միտաննի, Խաթթիի արքա, դիվանագիտություն, սահմանների անվտանգություն, դաշնակից, Խաթթուսա:

Սուպպիլուլիումա I-ը (մ.թ.ա. մոտ 1350–1322 թթ.) Խաթթիի ամենանշանավոր արքաներից և Հին Արևելքի ամենատաղանդավոր քաղաքական ու ռազմական գործիչներից մեկն էր: Նրա օրոք սկսվում է Խաթթիի նոր վերելքը, ուստի այդ արքային կարելի է համարել նաև նոր խեթական տերության հիմնադիրը<sup>1</sup>:

Սուպպիլուլիումա I-ն իր հաջողություններին հասնում էր ոչ միայն ռազմական, այլ նաև դիվանագիտական ճանապարհով: Նրա օրոք Խաթթին կնքել է մի շարք միջպետական պայմանագրեր հարևան և ենթակա երկրների տիրակալների հետ: Այդ պայմանագրերը հիմնականում միտված են եղել ապահովելու Խաթթիի գերիշխող դիրքը տարածաշրջանում, ինչպես նաև ամրապնդելու Խաթթիի ազդեցությունը նորանվաճ, ենթակա և հարևան երկրներում: Կնքված պայմանագրերի վերլուծությունը բավականին առատ նյութ է տրամադրում տվյալ ժամանակաշրջանի Խաթթիի և նրան ենթակա ու հարևան երկրների միջև հարաբերությունների պատմության վերաբերյալ, պատկերացում տալիս Խաթթիի միջազգային և միջպետական օրակարգի մասին:

Խուկկանայի հետ Սուպպիլուլիումա I-ի կնքած պայմանագիրը<sup>2</sup> ժամանակ

\* Հոդվածը մաս է կազմում «Միջպետական պայմանագրերը Խեթական տերության և Հայասայի միջև» գիտական թեմայի (2013–2015 թթ.), որը ֆինանսավորվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության Գիտության պետական կոմիտեի կողմից: Ընդունվել է տպագրության 20.09.2015: 1 Սուպպիլուլիումա I-ի ժամանակաշրջանի վերաբերյալ առավել մանրամասն տես **Bryce T.**, The Kingdom of the Hittites. New edition, Oxford, 2005, pp. 154–189:

2 CTH 42; **Friedrich J.**, Staatsverträge des Hatti-Reiches in hethitischer Sprache, Heft IV, 2 Teil, Leipzig, 1930, S. 103–163. **Carruba O.**, Die Hajasa-Verträge Hattis, in E. Neu and C. Rüster (eds.), Documentum Asiae Minoris, Wiesbaden, 1988, S. 59–75. **Akdogan R.**, Huqana Antlaşması B Nüshasına Birleşen Yeni Bir Tablet Parçası, “Colloquium

նակագրական առումով հավանաբար երկրորդ պայմանագիրն է, որը կնքել է Խաթթի արքան Հայասայի (Ազգի) հետ: Այն կարելի է դիտարկել նաև որպես Հայոց պատմության մեջ առաջին դիվանագիտական փաստաթուղթ, որը պահպանվել է համեմատաբար ամբողջական տեսքով<sup>3</sup>:

Խուկկանան խեթական աղբյուրներում հիշատակված Հայասայի (Ազգի) երրորդ տիրակալն էր Կարաննիից և Մարիայից հետո: Գր. Ղափանցյանը կարծում է, որ Խուկկանա անունն ունի փոքրասիական-խուրիական ծագում: Նա նշում է, որ անվան խեթերեն **huik-** կամ **hug-** արմատը կարող է նշանակել հնայել, իսկ անունն, ըստ այդմ, նշանակում է «հնայիչ»<sup>4</sup>: Գ. Զահուկյանը, չբացատրելով Գր. Ղափանցյանի վարկածը, առաջադրում է նաև Խուկկանա անձնանվան համադրումը խեթերեն **huhha** բաղադրիչը կրող **Huhanani**, **Huharmati**, **Huhšarpa** և այլ բառերի հետ, որոնք հանգում են խեթերեն **huhha-** պապ բառին<sup>5</sup>:

Ինչ վերաբերում է Մարիյա անվանը, Գ. Զահուկյանը սկզբնապես ենթադրում էր, որ այն կարելի է հանգեցնել հնդեվրոպական **\*mē-ro-s**, **\*mō-ro-s**, **\*mā-ro-s-** «ազնվական», «հսկա» արմատներին, կամ անունն ամբողջությամբ վերցված էր համարում հին հնդկական աղբյուրներից՝ խուրիական միջնորդությանը՝ **mārya** ձևով, որ նշանակում է «տղամարդ, երիտասարդ, սիրեկան» և հանգում է հնդեվրոպական **\*merjo-** «պատանի, երիտասարդ» արմատին, որից էլ ծագում են հայկական **mari-** «էգ», լատիներեն **maritus-** «ամուսնացած» և այլն բառերը<sup>6</sup>: Այնուհետև նա նշում է, որ Մարիյա անունը հայկական է և ունեցել է հնդեվրոպական ծագում, որից էլ առաջացել է նաև խուրիերեն լեզվում պահպանված **marya-** բառը<sup>7</sup>: Հարկ է նշել, որ այս անվանումը հանդիպում է և՛ Վանի թագավորության տեքստերում՝ **mari**, և՛ խուրիերենում՝ **marianne** ձևերով, որոնց համար Ի. Դյակոնովն առաջարկում է «ազնվական» թարգմանությունը<sup>8</sup>: Ն. Ադոնցը ենթադրում է, որ արձանագրության վերջին մասը մեկ այլ պայմանագիր է երկրորդ Մարիյայի հետ<sup>9</sup>: Վ. Խաչատրյանի կարծիքով, պայմանագրի «Մարիյան» տիտղոս է, առաջին դեպքում՝ որպես Հայասայի Կարաննի թագա-

Anatolicum», VIII, 2009, s. 45-76.

3 Հավանական է, որ մինչ այդ պայմանագիր էր կնքվել Թուդիսալիյա III-ի և Հայասայի տեր Մարիյայի միջև, որից պահպանվել են միայն հատվածներ (տե՛ս Քոսյան Ա., Մուրալիս II-ի հայասական արշավանքները (տր սկզբնաղբյուրներ), «ՊԲՀ», N 2, 2004, էջ 198, հղում 5: Նոյնի, Հայասան և Ազգին, Շնորհի ի վերուստ. առասպել, ծես և պատմություն, Եր., 2008, էջ 269, 274): Սովորաբար մասնագիտական գրականության մեջ այն ներկայացվում է Խուկկանայի պայմանագրի հետ միասին, որպես նրա մի մաս (տե՛ս Kitchen K.A., Lawrence P.J.N., Treaty, Law and Covenant in the Ancient Near East. Part 2: Text, Notes and Chromograms, Wiesbaden, 2012, էջ 47-48):

4 Капанцян Г., Хайаса-колыбель армян, Ер., 1948, с. 69-71. Տե՛ս նաև Kloekhorst A., Etymological Dictionary of the Hittite Inherited Lexicon, Leiden-Boston, 2008, էջ 347:

5 Տե՛ս Jahukyan G., The Hayasa language and its relation to the Indo-European languages, "Archive Orientalni", 29/3, 1961, էջ 374. Նոյնի, Хайасский язык и его отношение к индоевропейским языкам, Ер., 1964, էջ 44-45. Նոյնի, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, էջ 325: Անձնանվան վերաբերյալ տե՛ս նաև Հմայակյան Հ., Գրիգոր Ղափանցյանը և խեթագիտությունը (խեթահայկական պատմամշակութային փոխառնչություններ), թեկնածուական ատենախոսություն, Եր., 2013, էջ 28:

6 Տե՛ս Джаукян Г., Хайасский язык и его отношение к индоевропейским языкам, էջ 35-37.

7 Տե՛ս Джаукян Г., О соотношении хайасского и армянского языков, «ՊԲՀ», N 1, 1988, էջ 63, 65.

8 Տե՛ս Дьяконов И., Урартские письма и документы, М., 1963, էջ 39, N 12. Նոյնի, Die Arier im Vorderen Orient: Ende eines Mythos, Orientalia, vol. 41, fasc 1, 1972, S. 115, N 5.

9 Տե՛ս Ադոնց Ն., Հայաստանի պատմություն, Եր., 1972, էջ 38:

վորի տիտղոս, իսկ երկրորդ դեպքում՝ որպես Խուկկանայի տիտղոս<sup>10</sup>: Ի. Դյակոնովի կարծիքով, Խուկկանայի պայմանագրում հիշատակված առաջին Մարիյան հանդիսացել է Ազգիի առաջնորդ, իսկ երկրորդը՝ Խուկկանայի իշխանակից և Աննիայի նախորդ<sup>11</sup>: Ըստ մեկ այլ կարծիքի՝ գոյություն է ունեցել նաև Մարիյա III, որի հետ հետագայում պայմանագիր է կնքել Սուպպիլուլիումայի որդի Մուրսիլի II-ը, սակայն այդ պայմանագրի տեքստի միայն վերջին մասն է պահպանվել<sup>12</sup>: Մարիյա անունը տրված է նաև Տապպիզայի տեքստերում<sup>13</sup>: Այստեղ Մարիյան, ոմն Հապիրիի հետ միասին, հանդես է գալիս որպես Խաթթիի արքայի ենթակա, պաշտոնյա, որին նրանք նամակ են ուղարկում, և որտեղ խոսք է գնում նաև նրանց կողմից գուշակային հարցման վերաբերյալ: Սա խոսում է այն մասին, որ հավանաբար այդ անունը տարածված էր Խաթթիում, կամ այդ անձը նույնպես հայասացի է եղել: Վ. Իվանովը եզրակացրել է, որ **mariya-** բառն սկզբնապես նշանակել է «ինիցացիան անցած պատանի, որ մտել է տղամարդկանց դասի մեջ»<sup>14</sup>: Է. Լարոշն այն համադրում է խեթերեն **marri-**՝ **այն կողմ** կամ **marrija-** **հեղել** բառերի հետ<sup>15</sup>: Ս. Պետրոսյանը ևս այդ անձնանվան համար հավաստի է համարում «գինվորական» ստուգաբանությունը<sup>16</sup>:

Մենք համամիտ ենք, որ պայմանագրում Մարիյա անունով հիշատակված հայասացիներից առաջինը, ով ամենայն հավանականությամբ, մահապատժի էր ենթարկվել Խաթթիի արքունիքում<sup>17</sup>, հանդիսանում էր Հայասայի արքա Աննիայի պապը, իսկ մյուսը հանդիսացել է Խուկկանայի փեսան<sup>18</sup>: Խոսուն փաստ, որ Մարիյան տարածված անուն էր հայասական արքունիքում:

Պայմանագրի ներածական մասը՝ այն հատվածը, որտեղ առաջին անգամ նշվել է Խուկկանան, վնասված է և դեռևս 1930 թ. Յոհաննես Ֆրիդրիխի կողմից տառադարձվել էր՝ որպես **ap-pi-iz-zi-in UR.SAG-an** և թարգմանվել

10 Տես **Хачатрян В.**, Марийа–титул хайасских царей, “Древний Восток”, N 5, 1988, էջ 57–62. Սակայն **մարիյա** անունը չէր կարող լինել արքայի տիտղոս, հակառակ դեպքում բառի դիմաց չէր դրվի մարդ, տղամարդ գույց տվող սեպանշանը, որը դրվում է տղամարդկանց անուններից առաջ, որպես դետերմինատիվ:

11 Տես **Дьяконов И.**, Предыстория армянского народа, Ер., 1968, էջ 92, ծան. 43.

12 Տես **Carruba O.**, Die Hajasä-Verträge Hattis, Documentum Asiae Minoris, Wiesbaden, 1988, էջ 68.

13 Տես **Alp S.**, Hethitische Briefe aus Maşat-Höyük, Ankara, 1991, էջ 79, 206–210.

14 **Иванов В.**, Урартский marī, хурр. Marriane, хайасск. Marija, “Переднеазиатский сборник”, III. История и филология стран Древнего Востока, с. 101–112, 278). Մարիյա անվան վերաբերյալ տես նաև **Հմայակյան Հ.**, Գրիգոր Դավանցյանը և խեթագիտությունը, էջ 26–27:

15 Տես **Laroche E.**, Recueil d’onomastique hittite, Paris, 1952, էջ 113.

16 Տես **Պետրոսյան Ս.**, Դասերը և եռադասության դրսևորումները հին ու միջնադարյան Հայաստանում, դոկտորական ատենախոսություն, Եր., 2001, էջ 99–100:

17 Խուկկանայի պայմանագրում տվյալներ կան այն մասին, որ դեռևս Թուրիսալիյա III-ի օրոք Խաթթիի մայրաքաղաք հրավիրված Մարիյան սպանվել էր արքայի պալատում: Դրա համար իբր պատճառ էր հանդիսացել վերջինիս կողմից խեթական արքունիքում ընդունված բարոյական չափանիշների խախտումը (տես **Friedrich J.**, Staatsverträge des Hatti-Reiches in hethitischer Sprache, էջ 126–129): Այս դեպքը Սուպպիլուլիում I-ը հավանաբար հիշատակել է պայմանագրում որպես զգուշացում՝ ցանկանալով Խուկկանային անխոհեմ քայլերից ետ պահել:

18 Հարցին առավել մանրամասն անդրադարձել է Ա. Քոսյանը: Խուկկանայի պայմանագրի երկու բեկորներում, որոնք դրա պատմական ներածականի մասն են կազմում, ըստ Ա. Քոսյանի, հիշատակվում են Աննիայի պապի օրոք տեղի ունեցած իրադարձությունները: Վերոհիշյալ բեկորներում Մարիյա անվան հիշատակումը Հայասայի արքա Աննիայի հետ միասին կարող է վկայել Հայասայում Մարիյայի տոհմի իշխանության շարունակականության մասին: Այսինքն՝ Աննիյան ժառանգել է պապի իշխանությունը: Ինչ վերաբերում է Խուկկանային, ապա նրա կառավարումը, ըստ Ա. Քոսյանի, Հայասայում հնարավոր է մեկնաբանել որպես Մարիյայի տոհմի իշխանության ժամանակավոր ընդհատում (տես **Քոսյան Ա.**, Հայասան և Ազգին, էջ 278–280, 285–287):

«ստորադաս (կամ ցածրակարգ, երկրորդ կարգի) հերոս» (նկատի ունենալով, որ առաջին կարգի հերոսը ինքն էր՝ Սուպպիլուլիուման, կամ էլ Խուկանան չի ունեցել ազնվական ծագում)<sup>19</sup>: Սակայն այժմ խեթագիտական աշխատություններում այդ վատ ընթեռնելի հատվածը սովորաբար տառադարձվում է՝ որպես **ap-pi-iz-zi-in UR.GE<sub>7</sub>-an** («ստոր, ցածր շուն») <sup>20</sup>: Ըստ իս՝ քիչ հավանական է, որ Խաթթիի արքան նման ոչ հարիր ձևով նշեր այն մարդուն, որի հետ նա պայմանագիր էր կնքում և որին նա կնության էր տալիս իր քրոջը: Առավել ևս նման դիմելաձև ընդունված չէր խեթական դիվանագիտության պատմության մեջ<sup>21</sup>:

«Խուկանայի պայմանագիր» կոչված տեքստն իրենից ներկայացնում է հիմնական ձեռագիրը (CTH 42 A) (սյունակներ I-III) և նրան կից ավելի վաղ տեքստը՝ որպես հավելում (սյունակ IV) (CTH 42 B)<sup>22</sup>:

Պայմանագիրը սկսվում է «ներածական» խոսքով (A I 1-5), որտեղ Սուպպիլուլիուման նշում է, որ ինքը Խաթթուսայում Խուկանային առանձնացրել է մնացած հայասացիներից (այսինքն՝ Խաթթուսայում հայասացիներ կային - Ռ.Ղ.) և նրան կնության տվել իր քրոջը: Հաջորդ մասում (A I 6-30) Սուպպիլուլիուման պահանջում էր միայն իրեն որպես տիրակալ ճանաչել, նաև ճանաչել իր որդուն, որին նա մատնացույց կանի: Դրանից հետո Խուկանան պետք է ճանաչեր նաև Սուպպիլուլիումայի մյուս որդիներին, եղբայրներին: Խուկանան չպետք է ճանաչեր, կապ հաստատեր որևէ խեթական ազնվականի հետ՝ առանց Սուպպիլուլիումայի գիտության: Նա հիշեցնում է Խուկանային, որ պետք է իրեն հայտնի յուրաքանչյուր վատ բան, որ նա կլսի որևէ մեկից իր վերաբերյալ, և նա չպետք է դա թաքցնի իրենից, հակառակ դեպքում դա կհամարվի երդման խախտում (այսինքն՝ պայմանագրի կետերի խախտում - Ռ.Ղ.): Այնուհետև (A I 31-40) Սուպպիլուլիուման կրկնում է, որ Խուկանան պետք է միայն իր կողքին լինի և չճանաչի որևէ մեկի իշխանությունը՝ բացի իր իշխանությունից, և պաշտպանի միայն

19 Friedrich J., նշվ. աշխ., էջ 106-107. UR.SAG և UR.GI7 բառերի վերաբերյալ տե՛ս Rüter Ch., Neu E., Hethitisches Zeichenlexikon, Wiesbaden, 1989, էջ 116.

20 Stéu Beckman G., Hittite Diplomatic Texts, Atlanta, 1996, Treaty between Suppiluliuma I of Hatti and Huzqana of Hayasa, p. 23. Kitchen K.A., Lawrence P.J.N., Treaty, Law and Covenant in the Ancient Near East. Part 2: Wiesbaden, 2012, էջ 440-441. Kosyan A., Rulers of Hayasa: Hukkana, "Aramazd", 2014, vol. VIII, issues 1-2, էջ 128.

21 Գր. Ղափանցյանը appizzi խեթերեն բառը թարգմանում է որպես «երկրորդ, հաջորդ» (խեթ. appa-արմատից) և գտնում, որ այս տերմինը նշել է Խուկանայի (ըստ Գր. Ղափանցյանի՝ Խուկանա) ստորադաս կարգավիճակը խեթական արքայի հանդեպ (Капанцян Гр., Хайаса – колыбель армян, Ереван, 1948, с. 19-20): Ըստ Ն. Մարտիրոսյանի՝ Սուպպիլուլիումայի և Խուկանայի միջև կնքված պայմանագիրն իր ոճով և իմաստով շատ է տարբերվում Սուպպիլուլիումայի կնքած մյուս պայմանագրերից, որոնք սովորաբար սկսվում են ներածական մասով, սակայն այս դաշնագրի առաջաբանում տեղեկություն չկա նախկինում Խաթթիի և Հայասայի միջև եղած փոխադարձությունների մասին: Նա համաձայն չէ Յ. Ֆրիդրիխի այն մտքի հետ, որ այդ նախաբանը չկա, քանի որ Խուկանան ստորադասվել է Խաթթիի արքայի կողմից: Ըստ Ն. Մարտիրոսյանի՝ թե՛ Խուկանան շարքային մարդ լիներ, ապա հազիվ թե Սուպպիլուլիուման նրան կնության տար իր քրոջը: Ըստ հեղինակի՝ խեթերեն **appizzi** բառը թեև թարգմանվում է **տես, վերջին**, սակայն այդտեղ Սուպպիլուլիուման հավանաբար նկատի է ունեցել՝ «դու [Հայասայի] միակ հերոսն էիր, որին ընդունեցիր» (Մարտիրոսյան Ն., Շուպպիլուլիումի պետական դաշինքը Խուկանի և Խայաշայի ժողովուրդին հետ, «Խաթթերդ և անոր ոսկեղեն դաշտը», աշխատասիրեց և կազմեց Վահէ Հայկ, Նիւ Եորք, 1959, էջ 102-107):

22 Խուկանայի տեքստը հայտնի է երկու աղբյուրներից (A և B) A օրինակ = KBo 5.3+5.12+19.43+19.43a+KUB 26.38+40.35; B օրինակ = KUB 19.24+14.6+26.37+23.73+23.74+KBo 19.44+19.44a+19.44b+22.40+53.309 (տե՛ս նաև Akdoğan R., Huqana Antlaşması B Nüshasına Birleşen Yeni Bir Tablet Parçası, "Colloquium Anatolicum", VIII, 2009, s. 45).

իրեն: Սուպպիլուլիուման խոստանում է նմանապես պաշտպանել Խուկկանային, եթե նա հավատարիմ լինի, պաշտպանել նրա որդիներին, իսկ Սուպպիլուլիումայի որդին նմանապես կպաշտպանի Խուկկանայի որդիներին<sup>23</sup>: Որպես վկա են բերվում Խաթթիի հազար աստվածները<sup>24</sup>: Այնուհետև տրվում է պայմանագրում որպես վկա հանդիսացող «աստվածների շարքը» (A I 41-59): Այստեղ տրված են Խաթթիում պաշտվող հիմնական աստվածները, վերջում նաև՝ որպես վկա հանդես եկող լեռները, գետերը, գարունները, ամպերը, երկինքը, երկիրը, մեծ ծովը<sup>25</sup>: Տեքստի վերջնամասի 3 տողերը բացակայում են, հետո ևս մոտ 30 տող չի պահպանվել A տեքստի I սյունակի վերջում: Հաջորդ հատվածում (A II 1-9) (որի սկիզբը կտրոսված է) Սուպպիլուլիուման նորից սպառնում է Խուկկանային աստվածային նգովքով, եթե նա չաջակցի իրեն: Աստվածները կկործանեին Խուկկանային և նրան, ում կողմը նա կանցներ (հավանաբար նկատի ուներ Միտաննիի արքային, որի դեմ Սուպպիլուլիուման պատրաստվում էր պատերազմի դուրս գալ - Ռ.Ղ.): Այնուհետև Խաթթիի արքան կարծես «ոգևորում» է (A II 10-13) Խուկկանային՝ ասելով, որ եթե նա իր կողքին լինի, ապա աստվածները նրան կպաշտպանեն, և Խուկկանան կբարգավաճի: Սուպպիլուլիուման առաջարկում է նաև ռազմաքաղաքական «միություն» (A II 14-31) երկու երկրների միջև: Խուկկանան իր բանակով պետք է միանար Սուպպիլուլիումայի բանակին, եթե նա դուրս գար արշավի: Խաթթիի արքայի թշնամին պետք է դառնար Խուկկանայի թշնամին<sup>26</sup>: Պայմանագրի հաջորդ մա-

23 Այսպես կոչված Շատտիվազայի պայմանագրում նույնպես Սուպպիլուլիումայի որդի, Կարգամիսի արքա Պիլասսիլին և Միտաննիի գահի հավակնորդ Շատտիվազան պետք է դաշնակիցներ դառնային և օգնեին մեկը մյուսին (տե՛ս **Beckman G.**, Treaty between Suppiluliuma I of Hatti and Shattiwaza of Mittanni, էջ 42):

24 ԴԿ I: (38)... nu-ut-ta ka-a-ša ke-e ud-da-a-ar ŠA-PAL NI-IŠ DINGIR<sup>UM</sup> (39) te-eh-hu-un nu ka-a-ša ke-e-da-ni ud-da-ni-i LI-IM DINGIR<sup>MES</sup> (40) tu-li-ya hal-zi-ú-en (38) «Տես, քեզ (համար) այս բանը երդման տակ (39) դրեցինք և այս գործի համար 1000 աստվածների (40) խորհրդի կանչեցինք» (այստեղ նշված է **մենք**, որից կարելի է եզրակացնել, որ խոսքը գնում է Սուպպիլուլիումայի և նրա հոր՝ Թուդխալիյա III-ի մասին: Տե՛ս **Քոսյան Ա.**, Հայասան և Ազգին, էջ 278):

25 Շատտիվազայի պայմանագրի վերջնամասում որպես վկա հանդես եկող Խաթթիի աստվածներից բացի որպես վկա նշված են նաև լեռները, գետերը, ծովը, Եփրատ գետը, երկինքը և երկիրը, քամիները, ամպերը (տե՛ս **Beckman G.**, Treaty between Suppiluliuma I of Hatti and Shattiwaza of Mittanni, p. 43): Նմանապես նաև Ամուրրու պետության արքա Ազիրույի հետ կնքված պայմանագրում որպես վկա են բերվել ոչ միայն Խաթթիի և Ամուրրույի աստվածները, այլև հարևան երկրների աստվածները, լեռները, գետերը, գարունները, մեծ ծովը, երկինքը, երկիրը, քամիները, ամպերը և այլն (տե՛ս **Beckman G.**, Treaty between Suppiluliuma I of Hatti and Aziru of Amurru, էջ 36):

26 Փաստորեն Խուկկանան առանց Սուպպիլուլիումայի գիտության իրավունք չունեի որևէ այլ երկրի թագավորի հետ համագործակցել: Հայասան այս դաշնագրով արտաքին քաղաքականության մեջ ինքնուրույն գործելու հնարավորությունից զրկվում էր: Սուպպիլուլիումայի Ամուրրու պետության արքա Ազիրույի հետ կնքված պայմանագրում նույնպես նման կետ կար: Սակայն այստեղ հստակ նշված էին այն երկրները, որոնց դեմ եթե պատերազմի դուրս գար Խաթթիի արքան, ապա Ազիրուն պետք է նրան միանար: Այդ երկրներն էին՝ Խուրի (Միտաննի), Եգիպտոս, Բաբելոնիա, Աստատա, Ալգի, Սուկիշ, Կինգա, Նուխաշշի (Խուկկանայի պայմանագրում այդպիսի հարկեցում տրված չէր): Պայմանավորվածություն էր ձեռք բերվել նաև, որ խեթական զորքեր պետք է տեղաբաշխվեին Ամուրրու երկրում (ինչը նույնպես չկար Խուկկանայի պայմանագրում) (տե՛ս **Beckman G.**, Treaty between Suppiluliuma I of Hatti and Aziru of Amurru, p. 34): Սուպպիլուլիումայի կնքած մեկ այլ պայմանագրում (Նուխաշշի երկրի Տետտեյի հետ) խոսք էր գնում հարկերի մասին: Այստեղ հստակեցվում էր Տետտեյի կողմից Խաթթիին վճարվող հարկերի չափը: Տետտեն պետք է նաև զորք տրամադրեր Խաթթիի արքային, եթե նա պատերազմեր Խուրի երկրի, Եգիպտոսի, Բաբելոնիայի, Աշտատայի, Ալգիի, նաև Սուկիշ, Հալեպ, Կինգա երկրների դեմ: Պայմանագրում Խաթթիի արքան պահանջում էր նաև վերադարձնել բոլոր այն խեթահպատակներին, որոնք կհայտնվեին Նուխաշշիում (**Beckman G.**, Treaty between Suppiluliuma I of Hatti and Tette of Nuhashshi, pp. 51-53):

սում (A II 32-74) Սուպպիլուլիուման պահանջում էր նաև, որ Խուկկանան իրեն անմիջապես հայտնի խեթահպատակ այն անձանց մասին, որոնք խռովության կամ ապստամբության մտադրություն ունեին ընդդեմ Սուպպիլուլիումայի իշխանության, և զգուշացնում էր, որ նա չանցնի նրանց կողմը<sup>27</sup>: Նաև եթե որևէ թշնամական բան լսեր Խուկկանան, չպետք է թաքցներ այդ ամենը Սուպպիլուլիումայից, կամ թաքցներ այն անձին, որը դավեր էր նյութում Խաթթիի արքայի դեմ, քանզի այդ ամենը կդիտարկվեր որպես պայմանագրի խախտում: A տեքստի վերջին տողերը շատ հատվածական են և վնասված, ինչպես նաև տեքստ B-ի սկիզբը: Այնուհետև նորից հիշեցվում է, որ յուրաքանչյուր թշնամական գործողության վերաբերյալ Խուկկանան անմիջապես պետք է հաղորդի Սուպպիլուլիումային (գնա Խաթթիի արքայի մոտ կամ նամակ պետք է ուղարկի նրան): Սուպպիլուլիուման նորից և նորից Խուկկանային զգուշացնում է, որ նա սատար պետք է կանգնի իրեն, որի դիմաց աստվածները բարեհաճ կգտնվեն Հայասա երկրի հանդեպ, որը ինքը (Սուպպիլուլիուման - Ռ.Ղ.) տվել էր նրան<sup>28</sup>: Պայմանագրի հաջորդ մասն իրենից ներկայացնում է տեքստ A-ի՝ բավականին վնասված III սյունակի վերին հատվածը և տեքստ B-ի դիմային մասի հատվածական վերջնամասը, որոնք իրենց վնասվածության պատճառով չեն կարող թարգմանվել: Հաջորդ մասում (A III 1-24) Սուպպիլուլիուման հիշեցնում է Խաթթիի պալատական սովորույթների մասին, որոնք պետք է պահպաներ Խուկկանան: Եվ ամենակարևորը այն, որ նա չպետք է խեթական արքունիքի գաղտնիքները դուրս հաներ և տարածեր: Եթե Սուպպիլուլիուման որևէ անձի (նաև երկրի կամ քաղաքի) լավ վերաբերվեր կամ վատ, նմանապես պետք է վարվեր նաև Խուկկանան: Պայմանագրի հետաքրքիր հատվածներից է «Սեռական վարվելակերպի» վերաբերյալ մասը (A III 25-58), որտեղ Սուպպիլուլիուման հիշեցնում է, որ Խուկկանայի կինը՝ Սուպպիլուլիումայի քույրը, ուներ շատ քույրեր, և նախազգուշացնում է, որ Խաթթիում արգելված է սեռական հարաբերություն ունենանալ կնոջ քույրերի հետ, և որ դրա համար Խաթթիում մահապատիժ է սպառնում օրենքը խախտողին: Սուպպիլուլիուման զգուշացնում էր այդ մասին, քանի որ Հայասայում նման արգելք չկար: Խուկկանան կարող էր նրանց (կնոջ քույրերի, զարմուհիների) հետ ժամանակ անցկացնել, սակայն չպետք է փորձեր սեռական հարաբերության մեջ մտնել նրանց հետ: Խաթթիի արքան զգուշացնում էր նաև, որ Խուկկանան հեռու մնար պալատական կանանցից (խոսքը, իհարկե, Խաթթիի արքունական պալատի մասին էր - Ռ.Ղ.), կլինեին դրանք ազնվական կանայք, թե ծառաներ: Նրանց հետ նույնիսկ չէր կարելի խոսել: Եվ այստեղ նա բերում է Մարիյայի օրինակը, թե ինչպես էր նա նայել պալատական կնոջ վրա, թե ինչպես էր այդ ամենը տեսել Սուպպիլուլիումայի հայրը (Թուդիսալիյա III-ը - Ռ.Ղ.), որի պատճառով Մարիյային սպանել էին: Նա պատժվել էր միայն նայելու համար, այնպես որ Խուկկանան պետք է զգուշանար: Այս պահանջներին հաջորդում են նաև «այլ պահանջներ»: Սուպ-

27 Այսինքն՝ բացի արտաքին ռազմաքաղաքական փոխհարաբերությունների ոլորտից, Խաթթին Հայասայից պահանջում էր, որ այն իր ռազմական դաշնակիցը լինի նաև իր երկրի ներսի թշնամիների դեմ, եթե այդպիսիք լինեն:

28 Խաթթիի արքան նորից հիշեցնում էր, որ ինքն է նրան նշանակել Հայասայի տեր:

պիլուլիուման զգուշացնում է Խուկկանային, որ նա կին չվերցնի Ազգիից և բաժանվի այն կնոջից (ազգեցի), որը նա մինչ այդ ուներ: Նրան Խուկկանան կարող էր դարձնել իր հարձը, սակայն ոչ իր օրինական կինը<sup>29</sup>: Եվ Խուկկանան պետք է Մարիյայից վերցնել իր դստերը, որին մինչ այդ կնության էր տվել նրան: Սուպպիլուլիուման պահանջում է, որ Խուկկանան վերադարձնի նաև Հայասայում գտնվող խեթահպատակներին<sup>30</sup> և վերականգնի Խաթթիի սահմանները<sup>31</sup>: Սրանից հետո 18 տող կորսված է A տեքստի IV սյունակի սկզբում, և Խուկկանայի տեքստն ավարտվում է, և Մարիյայի ու Հայասայի մարդկանց հետ կնքված պայմանագիրն է սկսվում<sup>32</sup>: Այստեղ առաջին 15 տողերը չափազանց հատվածական են: Հասկանալի են միայն մի քանի արտահայտություններ Խաթթիի արքայական ընտանիքի նկատմամբ հավատարմության վերաբերյալ: Այնուհետև Խաթթիի արքան նորից զգուշացնում է, որ եթե որևէ անձ կամ երկիր թշնամանք տածի Խաթթիի դեմ, այդ ամենի մասին ինքը պետք է անմիջապես տեղեկացվի: Այնուհետև Խաթթիի արքան դիմում է Հայասայի մարդկանց և Մարիյային<sup>33</sup> կոչ անելով նրանց օգնել իրեն, որի դիմաց ինքն էլ օգնության կհասնել նրանց: «Անեծք»-ի մասում նորից նախազգուշացում կա, որ Հայասայի մարդիկ և Մարիյան պարտավոր են հետևել պայմանագրի կետերին, հակառակ դեպքում աստվածները կպատժեն և կոչնչացնեն նրանց, նրանց կանանց, զավակներին, ընտանիքներին, դաշտերը, [նրանց քաղաքները], խաղողի այգիները, նրանց ամայի վայրերը, նրանց կովերը, ոչխարները և այլ ունեցվածքը: Եթե նրանք չխախտեն պայմանագիրը, ապա Խաթթիի արքան նրանց (Հայասայի մարդկանց, Մարիյային և Հայասա երկրին) վնաս չի հասցնի:

Փաստորեն, ըստ պայմանագրի, Խուկկանան պարտավորվում էր, բացի Սուպպիլուլիումա I-ից, նրա ժառանգորդ որդուց կամ մյուս որդիներից և

29 Սուպպիլուլիումա I-ի Միտաննիի գահի հավակնորդ Շատտիվազայի հետ կնքած պայմանագրում նույնպես նշվում է, որ վերջինս կդառնա Միտաննիի արքա, իսկ Սուպպիլուլիումայի դուստրը՝ Միտաննիի թագուհի: Ոչ մի այլ կին չէր կարող ավելի գերադասվել, կամ հավասար համարվել, քան Շատտիվազայի խեթացի կինը: Շատտիվազային թույլատրվում էր ունենալ երկրորդ, կրտսեր կին, սիրուհի, հարձ, սակայն առաջին կինը պետք է մնար Սուպպիլուլիումայի դուստրը, ոչ ոք նրան հավասար չպետք է լիներ: Փաստորեն, միայն Շատտիվազայի և Սուպպիլուլիումայի դստեր որդիները պետք է հավակնեին Միտաննիի գահին (տե՛ս **Beckman G.**, Treaty between Suppiluliuma I of Hatti and Shattiwaza of Mittanni, էջ 40-41):

30 Այստեղ կարևորն այն է, որ տվյալ պահին Հայասան մի երկիր էր, որտեղ կարող էր ապաստանել Խաթթիից փախած բնակչությունը. բնականաբար, փախստականների համար այն համարվում էր Խաթթիի գերիշխանությունից դուրս ընկած տարածք: Սուպպիլուլիումայի՝ Շատտիվազայի հետ կնքած պայմանագրում նույնպես նման կետ կար: Միտաննիի արքան պետք է վերադարձնել բոլոր նրանց, ովքեր Խաթթիից փախել և ապաստան էին գտել Միտաննիի տարածքում (տե՛ս **Beckman G.**, նշվ. աշխ., էջ 41): Սուպպիլուլիումա I-ի՝ Ամուրրու պետության արքա Ազիրուի հետ կնքած պայմանագրում նշվում էր, որ եթե Խաթթիից որևէ մեկը փախչեր և ապաստաներ Ամուրրուում, ապա Ազիրուն անմիջապես պետք է վերադարձնել նրան: Սակայն Խաթթիի արքան նույնը նրան չէր խոստանում և կարող էր Ամուրրուի փախստականներին չվերադարձնել (տե՛ս **Beckman G.**, Treaty between Suppiluliuma I of Hatti and Aziru of Amurru, էջ 35-36):

31 Ի տարբերություն Սուպպիլուլիումայի կնքած այլ պայմանագրերի, որտեղ հստակեցվում էին տվյալ երկրի սահմանները (օրինակ՝ Ուգարիթի արքա Նիքմադդուի հետ կնքված պայմանագրում (տե՛ս **Beckman G.**, Treaty between Suppiluliuma I of Hatti and Niqmaddu II of Ugarit, p. 31)), Խուկկանայի պայմանագրում նման քան գոյություն չունի:

32 Այն հավանաբար կնքվել է Թուդխալիյա III-ի հետ և կցվել Խուկկանայի պայմանագրին (տե՛ս **Kitchen K.A., Lawrence P.J.N.**, Treaty, Law and Covenant in the Ancient Near East. Part 1, էջ 454-455.)

33 Շատտիվազայի հետ կնքված պայմանագրում նույնպես պայմանագրի մասնակից կողմ են հիշատակվել խուրիները (տե՛ս **Beckman G.**, Treaty between Suppiluliuma I of Hatti and Shattiwaza of Mittanni, էջ 44):

եղբայրներից, չճանաչել որևէ այլ մեկի իշխանության օրինականությունը Խաթթիում: Սուպպիլուլիուման դրա փոխարեն խոստանում էր նույն ձևով վարվել Խուկկանայի, նրա որդու հետ: Նրանց որդիները միմյանց հետ կապվելու էին միևնույն փոխադարձ պարտավորությամբ: Երկու կողմերն էլ հանձն էին առնում միմյանց ռազմական աջակցություն ցույց տալ: Նրանք պարտավոր էին նաև մեկը մյուսին նախազգուշացնել իրենց դեմ հայտնաբերված դավադրությունների մասին: Սակայն պայմանագրում Սուպպիլուլիուման չի շրջանցում այն փաստը, որ Հայասան դեռ պահում է Խաթթիից գրաված հողերը, և որ Խուկկանայի երկրում կային նաև խեթահպատակներ, ուստի դաշնագրի մի կետը Խուկկանային պարտավորեցնում էր նրանց վերադարձնել և դուրս գալ գրավված խեթական մարզերից (հավանաբար Վերին երկրի արևելյան շրջանները): Պայմանագրի համաձայն՝ Խաթթիի արքան իր քրոջը կնության է տալիս Խուկկանային: Միևնույն ժամանակ Սուպպիլուլիուման պահանջում է, որ Խուկկանան կին չառնի Հայասայի (Ազգիի) իր ազգակիցներից: Նպատակը, թերևս, մեկն էր. խեթուհին լինել նրա միակ կինը՝ ապահովելով խեթական ներկայությունը հայասական արքունիքում: Սուպպիլուլիուման դրանով փորձում էր գահի ժառանգման հարցը լուծել հօգուտ իր քրոջ ապագա որդու: Նման նպատակ ուներ Սուպպիլուլիուման նաև, երբ իր մի դստերը կնության էր տալիս Միտաննիի գահի հավակնորդ Շատտիվազային<sup>34</sup>, իսկ մյուս դուստր Մուվաթթիին՝ Միրա երկրի տեր Մասիտուիլուվային<sup>35</sup>:

Հետաքրքիր փաստ է նաև այն, որ Սուպպիլուլիումա I-ն իր բոլոր պայմանագրերում հանդես է գալիս որպես Խաթթիի մեծ արքա՝ բացի Խուկկանայի պայմանագրից, որտեղ նա հիշատակվել է պարզապես որպես Խաթթիի արքա: Չկա նաև արքայի՝ ինքն իրեն որպես հերոս հորջորջումը, բացի այդ, նա չի նշում, որ ինքը Թուդիսալիայի որդին էր, ինչն ընդունված էր Խաթթիի արքաների մոտ<sup>36</sup>: Հավանական է կարծել, որ Սուպպիլուլիուման կան պայմանագիրը կնքել էր դեռևս իր հոր՝ Թուդիսալիայ III-ի օրոք, երբ ինքը հանդես էր գալիս որպես համակառավարող<sup>37</sup>, կան նա դեռ չէր վերականգնել տերության հզորությունը և իրեն մեծ արքա և հերոս չէր զգում, որ այդպես իրեն նշել տար պայմանագրում: Բացի այդ, ի տարբերություն Հայասայի՝ հիշատակված մյուս տիրակալների՝ Կարաննիի և Աննիայի, Խուկկանան պայմանագրում և այլ խեթական աղբյուրներում ընդհանրապես չի հիշատակվել թագավոր տիտղոսով (նա, հավանաբար, պարզապես միայն կառավարիչ էր նշանակված):

34 Տե՛ս **Beckman G.**, նշվ. աշխ., էջ 40:

35 Տե՛ս **Beckman G.**, Treaty between Mursili II of Hatti and Kupanta-Kurunta of Mira-Kuwaliya, էջ 69-77.

36 Այդ ամենը կարելի է համեմատել նաև Սուպպիլուլիումայի թոռան՝ Խաթթուսիլիի ժամանակաշրջանի հետ, երբ նա մինչ Խաթթիի մեծ արքա դառնալը կրում էր Խակմիսի արքա տիտղոսը և կառավարում էր տերության հյուսիսարևելյան շրջանները (**Bryce T.**, The Kingdom of the Hittites, pp. 247-251. Տե՛ս նաև **Kempinski A.**, Suppiluliuma I: The Early Years of His Career, "Tel Aviv", 1, 1993, էջ 85): Հավանական է, որ Սուպպիլուլիուման նույնպես նշանակված լինել Խաթթիի այդ վտանգավոր ուղղությունների կառավարիչ-արքա: Խաթթիի արքաների տիտղոսների վերաբերյալ տե՛ս **Beckman G.**, Royal ideology and state administration in Hittite Anatolia, 1995, Civilizations of the Ancient Near East, 1995, vol. I, էջ 532.

37 Նման կարծիքի է նաև Ա. Քոսյանը, որը գտնում է, որ Խուկկանայի պայմանագիրը կնքվել է Թուդիսալիայ III-ի և Սուպպիլուլիումայի համատեղ կառավարման շրջանում (տե՛ս **Քոսյան Ա.**, Հայասան և Ազգիին, էջ 278):



Պայմանագրից կարելի է եզրահանգել, որ Սուպպիլուլիուման Խուկկանային հրավիրել էր խեթական արքունիք, նրան կնության տվել իր քրոջը, պայմանագիր էր կնքել նրա հետ, որից հետո ուղարկել էր Հայասա, միգուցե խեթական զորքով: Պայմանագրի մի հատվածում Սուպպիլուլիուման նշում է, որ ինքն է տվել Հայասա երկիրը Խուկկանային: Սա կարող է նշանակել, որ Խուկկանան հաստատվել էր կամ պետք է հաստատվեր Հայասայում խեթական աջակցությամբ: Այսինքն՝ խեթական պատկերացմամբ Խուկկանան պետք է դառնար Խաթթի ենթակա, հավատարիմ դաշնակից: Փաստորեն Խուկկանայի խնդիրը եղել է այն, որ նա պետք է ապահովեր Խաթթիի հյուսիսարևելյան սահմանների անվտանգությունը, որպեսզի Սուպպիլուլիուման կարողանար իր զորաբանակները շարժել դեպի հարավ՝ Միտաննիի դեմ: Դրան էր միտված խեթական արքայի պահանջը՝ ձանաչել միայն իր իշխանությունը և զորքեր տրամադրել իրեն, եթե որևէ երկիր թշնամական գործողություններ ձեռնարկեր ընդդեմ Խաթթիի: Հայասայի դիրքորոշումը կարևոր էր նաև այն առումով, որ այդ ժամանակ Հայկական լեռնաշխարհի մյուս կարևոր պետությունը՝ Իսուվան, հակախեթական դիրք էր գրավել<sup>38</sup>:

Չի կարելի չնշել նաև այն փաստը, որ Խուկկանայի առջև դրված պայմանները, համեմատած այլ երկրների արքաների հետ կնքած պայմանագրերի, ավելի մեղմ էին. Խուկկանան ոչ մի հարկ կամ տուրք չպետք է վճարեր, ինչպես օրինակ՝ Ուգարիթի արքա Նիքմադդուն<sup>39</sup>: Խուկկանայի պայմանագրում չկա կետ նաև այն մասին, որ Խուկկանան պետք է ամեն տարի ներկայանար Սուպպիլուլիումային, ինչպես օրինակ՝ Նուխասաշիի արքա Տետտեն<sup>40</sup>:

Հավանաբար պայմանագրում հիշատակված Հայասայի մարդկանց (ավագներ կամ աշխարհաժողով) որպես դաշինքի մասնակից կողմ հիշատակելը վկայում է այն մասին, որ Հայասայի (Ազգիի) տիրակալի իշխանությունը բացարձակ չի եղել: Հավանաբար այն մոտ է եղել «կյուրոպեդիայում» Քսենոփոնի հիշատակած Հայոց թագավորի իշխանությանը, որը, ինչպես և հոմերոսյան Հունաստանում, սահմանափակվել է ավագների խորհրդով՝

38 Խեթական արքան Իսուվայից շարժվել է դեպի Ծուխասպա երկիր, ավերել այն և մտել Հայասա՝ Լախա լեռների շրջանը, այնուհետև վերադարձել Իսուվա: Դեպի Իսուվա և Ծուխասպա արշավանքը տեղի է ունեցել Սուպպիլուլիումայի սիրիական պատերազմից առաջ՝ Խուկկանայի պայմանագրի կնքումից հետո: Այդ իրադարձությունների վերաբերյալ տրված են Սուպպիլուլիումայի և Միտաննիի արքա Շատտիվագայի միջև կնքված պայմանագրում, ինչպես նաև Սուպպիլուլիումայի տարեգրության մեջ (**Güterbock H.G.**, *The Deeds of Suppiluliuma as Told by his Son, Mursili II*, "Journal of Cuneiform Studies", 10, 3, 1956, pp. 83-84. **Beckman G.**, *Treaties between Suppiluliuma I of Hatti and Shattiwaza of Mittanni*, p. 39):

39 Տե՛ս **Beckman G.**, *Edict of Suppiluliuma I of Hatti concerning the Tribute of Ugarit*, էջ 152. Այս փաստաթուղթը մասն է կազմում Նիքմադդու II-ի հետ կնքած պայմանագրի: Թվարկվում են նաև այն հարկերը և նվերները, որ Ուգարիթի արքան պետք է տար Խաթթիի արքային, թագուհուն, թագաժառանգին, գլխավոր դպիրին և այլ խեթական բարձրաստիճան պաշտոնյաների: Սուպպիլուլիումա I-ի կնքած պայմանագրերից կարևոր է նաև Ամուրրու պետության արքա Ազիբուի հետ կնքված պայմանագիրը, որտեղ նաև ամրագրվում է այն հարկը, որ Ազիբուն ամեն տարի պետք է վճարեր Խաթթիի արքային (տե՛ս **Beckman G.**, *Treaty between Suppiluliuma I of Hatti and Aziru of Amurru*, էջ 33): Սուպպիլուլիումայի կնքած մեկ այլ պայմանագրում (Նուխասաշի երկրի Տետտեի հետ, **Beckman G.**, *Treaty between Suppiluliuma I of Hatti and Tette of Nuhashshi*, pp. 50-54) ևս խոսք է գնում հարկերի մասին: Չսպառ հատվածը մասնակի վնասված է, սակայն պարզ է, որ այստեղ հատկեցվում էր Տետտեի կողմից Խաթթիին վճարվող հարկերի չափը:

40 Տե՛ս **Beckman G.**, նշվ. աշխ., էջ 51:

բուլետով (βουλή), և ժողովրդական ժողովով՝ էկլեսիայով (ἐκκλησία)<sup>41</sup>: Տեղին է հիշատակել նաև Հայոց աշխարհաժողովը, որը դարեր շարունակ պետականակիր կարևոր համակարգ է հանդիսացել Հայաստանում և որի հիմքերն, ամենայն հավանականությամբ, կարող ենք գտնել հայասական ժամանակահատվածում:

Սակայն դատելով որոշ հանգամանքներից՝ Խուկկանան հավանաբար չի կարողացել երկար ժամանակ պահպանել իր իշխանությունը Հայասայում, և Սուպպիլուլիուման հետագայում ստիպված է եղել պատերազմել Հայասայի դեմ, կամ Հայասայի և Խաթթիի միջև բախում է տեղի ունեցել: Սուպպիլուլիումայի որդի Մուրսիլի II-ն իր տարեգրություններում նշում է, որ երբ հայրը Միտաննիում էր, խեթահպատակները փախել էին դեպի Հայասա երկիր, և բացի դրանից՝ հայասացիները հարձակվել էին Խաթթիի վրա՝ փաստորեն խախտելով Խուկկանայի կնքած պայմանագիրը<sup>42</sup>: Այդ մասին է հիշատակված նաև Սուպպիլուլիումայի տարեգրության մի հատվածում, որտեղ նշվում է, որ Հայասան թշնամական գործողություններ էր ձեռնարկել Խաթթիի դեմ: Տրվել է նաև Վերին երկրի անունը, որը կարող էր նշանակել, որ հայասացիները հարձակվել էին այդ խեթական երկրամասի վրա: Սա հավանաբար այն ժամանակաշրջանն է, երբ Խաթթիի արքան զբաղված էր Միտաննիի դեմ պատերազմով<sup>43</sup>: Այդ ամենի մասին հավանաբար տրված է Սուպպիլուլիումայի նամակում՝ ուղղված Եգիպտոսի փարավոն Էյեին, որտեղ նա թվարկում էր իր նվաճումները Փոքր Ասիայում, Հայասայում, Ալզիում և Սիրիայում<sup>44</sup>: Հաշվի առնելով, որ Եգիպտոսի փարավոն Էյեն գահակալել է մ.թ.ա. սոտ 1324-1320 թթ., այդ իրադարձությունները տեղի են ունեցել մինչ վերջինիս գահ բարձրանալը<sup>45</sup>:

Այսպիսով, Սուպպիլուլիումա I-ը ցանկանում էր Հայկական լեռնաշխարհի երկրները դիվանագիտական ճանապարհով կտրել Խաթթիի գլխավոր հակառակորդից՝ Միտաննիից, և ռազմական աջակցություն ստանալ այդ երկրներից: Հետագայում նրան հաջողվեց հակամիտանական ճամբար ներքաշել նաև Հայկական լեռնաշխարհի մեկ այլ պետության՝ Ալզիին<sup>46</sup>:

Որպես **ամփոփում** կարելի է նշել, որ Խուկկանայի պայմանագիրը, որը հինարևելյան աշխարհի կարևորագույն պայմանագրերից մեկն է, միևնույն ժամանակ Հայոց պատմության առաջին, համեմատաբար ամբողջական պահպանված պայմանագիրն է՝ ամենաառաջին դիվանագիտական փաստաթուղթը:

41 Տե՛ս **Կրկյաշարյան Ս.**, Հին Հայաստանի պետական կառուցվածքը (մ.թ.ա. VI-մ.թ. IV դդ.), Եր., 2005, էջ 96:  
42 Տե՛ս **Götze A.**, Die Annalen des Muršiliš, “Mitteilungen der Vorderasiatisch-ägyptischen Gesellschaft”, 38, 1933, էջ 94-99; **Ղազարյան Ռ.**, Մուրսիլի II-ի «Տասնամյա» տարեգրությունը, Եր., 2013, էջ 54-55:  
43 Տե՛ս **Güterbock H.G.**, The Deeds of Suppiluliuma as Told by his Son, 10, 4, էջ 114.  
44 Տե՛ս **Քոսյան Ա.**, Հայասան և Ազգին, էջ 277:  
45 Գոյություն ունի նաև մի գուշակային տեքստ, որում խեթական արքան հարցում է անում, որի միջոցով փորձում է տեղեկանալ ազգեցի Խուկկանայի հավատարմության մասին իր և իր սերունդների հանդեպ (KUB XVIII 2 (CTH 579. **Klinger J.**, Zur Historizität einiger hethitischer Omina, “Altorientalische Forschungen”, 25/1, 1998, S. 106-107. **Քոսյան Ա.**, Հայկական լեռնաշխարհի տեղանունները, Եր., 2004, էջ 136-137):  
46 Տե՛ս **Beckman G.**, Treaty between Suppiluliuma I of Hatti and Shattiwaza of Mittanni, էջ 39.

**Ռոբերտ Պ. Ղազարյան** – Գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է Հայկական լեռնաշխարհի, Փոքր Ասիայի մ.թ.ա. II հազարամյակի պետությունների պատմության հարցերը: Մասնավորապես զբաղվում է Հայասա (Ազզի) պետության և Խաթթիի միջև քաղաքական և մշակութային հարաբերությունների պատմության խնդիրներով:

## Summary

### “HUKKANA’S TREATY” AS THE DIPLOMATIC DOCUMENT OF THE HISTORY OF ARMENIA

Robert P. Ghazaryan

**Key words** – Hukkana, Suppiluliuma, Hayasa, Hatti, agreement, Mary, Tudhaliya, Mitanni, Hatti King, diplomacy, border security, an ally, Hattusa.

During the reign of the king of Hatti Suppiluliuma I, Hatti signed a number of interstate treaties with the rulers of the neighboring and subject countries. Those treaties mainly aimed at ensuring Hatti’s dominant position in the region. Chronologically the treaty Hatti signed with Hukkana is probably the second treaty with Hayasa (Azzi). According to the treaty Hukkana was not to recognize the legitimacy of anyone else’s rule in Hatti except that of Suppiluliuma I, his heir son or other sons and brothers. In return, Suppiluliuma promised to treat Hukkana and his heir the same way. Their sons were to have the same mutual obligation to each other. Both parties undertook to show military support to each other against enemies. They also had to warn about any conspiracy against each other. It can be assumed from the treaty that Suppiluliuma had invited Hukkana to the Hittite court, had his sister married to him, signed a treaty with him after which he sent Hukkana to Hayasa, probably with Hittite troops. This can mean that Hukkana had established himself or was going to establish himself in Hayasa with the Hittite support. Thus, Hukkana had to ensure the safety of the north-eastern borders of Hatti for Suppiluliuma to be able to move his army to the south – against Mitanni. Thus, Suppiluliuma I wanted to diplomatically disconnect the countries of the Armenian Highland from Mitanni, the main antagonist of Hatti, and to receive military support from those countries. It can be mentioned that Hukkana’s treaty, being one of the most important treaties of the Ancient Orient, is at the same time the first comparably completely preserved treaty, the oldest diplomatic document of the Armenian history.

## “ДОГОВОР ХУККАНЫ” КАК ДИПЛОМАТИЧЕСКИЙ ДОКУМЕНТ ИСТОРИИ АРМЕНИИ

Роберт П. Казарян

**Ключевые слова** – Хуккана, Суппилулиума, Хайаса, Хатти, соглашение, Мария, Тудхалия, Митанни, король Хатти, дипломатия, безопасность границ, союзник, Хаттуса.

Во время правления хеттского царя Суппилулиумы I Хеттская держава заключила несколько межгосударственных договоров с владыками сопредельных и вассальных государств. Эти договора в основном были нацелены на обеспечение доминирующего положения Хеттской державы в регионе. Договор хеттского царя с Хукканой хронологически является вторым договором, подписанным с владыками государства Хайаса (Аззи). В соответствии с договором, Хуккана не должен был признавать легитимность власти кого либо другого в Хатти, кроме Суппилулиумы, его наследника, его других сыновей и братьев. В свою очередь Суппилулиума обещал таким образом поступать с Хукканой и его наследником. Их сыновья должны были связаться таким же взаимным обязательством. Обе стороны должны были взять обязательство оказать друг другу военную помощь. Они должны были предупредить о заговорах против друг друга. Из договора можно заключить, что Суппилулиума пригласил Хуккану в Хеттский царский двор, дал ему в жены свою сестру, подписал договор с ним, после чего отправил его в Хайасу, может быть с хеттскими войсками. Это могло означать, что Хуккана утвердился или должен был утвердиться в Хайасе при помощи хеттов. Фактически, Хуккана должен был обеспечить безопасность северовосточных границ Хеттской державы, чтобы Суппилулиума мог начать войну против Митанни. Таким образом, при помощи дипломатии царь Суппилулиума хотел отрезать страны Армянского нагорья от главного врага Хатти – Митанни. Можно констатировать, что договор Хукканы, являясь одним из важных договоров древневосточного мира, в то же время является первым, сравнительно цельно сохранным договором, самым древним дипломатическим документом армянской истории.